

ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆԱՌԻԿ ԳԱԳԱԹԸ

Ա. Մ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Լրացավ սովետահայ խոշորագույն լեզվաբան Հ. Աճառյանի ծննդյան 100-ամյակը: Նրա գրչին են պատկանում ավելի քան 200 աշխատություններ, տասնյակ մենագրական ուսումնասիրություններ, որոնք հայագիտության, հայ մշակույթի ոսկե ֆոնդն են կազմում: Նրա ուսումնասիրությունների շնորհիվ հայագիտությունը և հայերենագիտությունը բարձրանալով մի նոր աստիճանի, համաշխարհային ճանաչում է ստացել:

Ամուր կանգնած լինելով ավանդական լեզվաբանության հիմքերի վրա, հմտորեն օգտագործելով նրա բերած նվաճումները, ստեղծագործաբար յուրացնելով նախորդ շրջանի և իր ժամանակի հայագիտության արդյունքները, գիտական բարձր սկզբունքներով և մեթոդաբանությամբ, փաստական նյութի լայն ընդգրկմամբ ու դասակարգմամբ, տեսական խոր ընդհանրացումներով նա կատարեց հայերենի համակողմանի ուսումնասիրությունը, սկզբնավորեց և զարգացրեց հայերենագիտության նոր ուղղություններ և արժանիորեն դարձավ նրա մի շարք ճյուղերի առաջամարտիկը: Հ. Աճառյանը իրավամբ համարվում է հայերեն բառարանների որոշ տիպերի և տեսակների ստեղծման, հայ գիտական բարբառագիտության, հայոց լեզվի պատմության, հայերենի պատմա-համեմատական և համադրական բազմակողմանի ուսումնասիրության հիմնադիրը հայ իրականության մեջ: Նրա մեղվաջան աշխատանքի շնորհիվ հավաքված հսկայական փաստական նյութը, ընդգրկվող բնագավառների, խնդիրների և հարցերի ուսումնասիրությունը իրենց պատմական և արդիական արժեքով մեծ նպաստ են բերում լեզվաբանությանը, ընդհանրապես և հայերենագիտությանը մասնավորապես:



Հյուսիս Հակոբի Աճառյանը ծնվել է 1876 թ. մարտի 8-ին, Կոստանդնուպոլսում, արհեստավորի ընտանիքում: Նախնական կրթությունն ստանում է Պոլսի Կեդրոնական վարժարանում, որտեղ և աշակերտում է ժամանակի արևմտահայ խոշոր մանկավարժներին ու մտավոր գործիչներին: Վարժարանն ավարտելուց հետո, 1895 թ. մեկնում է Ֆրանսիա՝ բարձրագույն:

կրթութիւն ստանալու ցանկութեամբ: Սորբոնի համալսարանում սովորելու ընթացքում աշակերտում է մեծանուն լեզվաբան Անտուան Մեյեին, որի հետ նա տարիներ շարունակ գիտական բարեկամական լայն կապերի մեջ էր: Այդ օտար միջավայրում իր իսկ միջոցներով «հանապազօրյա հացը» վաստակելով և մի կերպ քարշ տալով իր ֆիզիկական գոյութիւնը, նա ոչ միայն ազահոթեցաւ կլանում է գիտութեան նորութիւնը, ստանում գիտական անհրաժեշտ պաշար, այլև ստեղծում է լեզվաբանական իր առաջին գործերը:

Ուսանողական տարիներին արդեն, 1897 թ. «Լազերենի քերականութեան» համար Հ. Աճառյանը ընտրվում է Փարիզի լեզվաբանական ընկերութեան անդամ: Նույն թվականին Փարիզում կայացած արևելագիտների տասներեքերորդ կոնգրեսում նա հանդես է գալիս հայերենի մասին երկու զեկուցումով և անմիջապէս արժանանում հայագետ-հնդեվրոպաբան Հյուբշմանի ուշադրութեանը, որի հրավերով Հ. Աճառյանը 1898 թ. տեղափոխվում է Ստրասբուրգ և ունենդրում նրա դասախոսութիւնները:

Գիտական հարուստ պաշարով, ատեղծագործական անսպառ եռանդով Հ. Աճառյանը վերադառնում է հայերենի և իր մասնակցութիւնն է բերում հայերենի գիտութեան, մշակույթի, մանկավարժութեան, լուսավորութեան և սերունդների հայացի դաստիարակութեան մեծ գործին: Երկար տարիներ նա մանկավարժական-ուսուցչական աշխատանք է կատարում էջմիածնում, Նոր Բայազետում, Շուշիում, Նոր Նախիջևանում և այլուր: Այդ տարիներին մոտիկից շփվելով տարբեր շրջանների հայ բնակչութեան հետ, հարուստ նյութ է հավաքում իր ուսումնասիրութիւնների համար:

Հ. Աճառյանի գիտական-մանկավարժական բեղմնավոր գործունեութիւնը ծավալվում է հատկապէս սովետական իշխանութեան տարիներին, երբ ատեղծվում են նրա գլուխգործոցները, հիմնական աշխատութիւնների գերակշիռ մասը:

Երևանի պետական համալսարանի հիմնադրումից հետո՝ որպէս հայագիտական, ընդհանուր լեզվաբանական, արևելյան լեզուների և արևելագիտական առարկաների անփոխարինելի մասնագետ Հ. Աճառյանը հրավիրվում է դասախոսական աշխատանքի: Իրեն հատուկ պարտաճանաչութեամբ և բարեիդեոլոգիայով, հասարակական պարտքի մեծ զգացումով նա լծվում է նոր սերնդի դաստիարակութեան, հայագետների, հայոց լեզվի մասնագետների, արևելագետների պատրաստման գործին, ձեռնամուխ է լինում, ակտիվ մասնակցութիւն է ցուցաբերում հայագիտական, արևելագիտական, ընդհանուր և համեմատական լեզվաբանութեան առարկաների վերաբերյալ ծրագրի ու ձեռնարկների ստեղծման դժվար ու պատասխանատու աշխատանքներին:

Պետական համալսարանում աշխատելու երկար տարիների ընթացքում նա եղել է, նախ՝ հայոց լեզվի, ապա՝ արևելյան բանասիրութեան և լեզուների ամբիոնի վարիչ, դասախոսել է հայոց լեզվի պատմութիւն, բարբառագիտութիւն, ընդհանուր լեզվաբանութիւն, համեմատական լեզվաբանութիւն, գրաբար, սանսկրիտ, հունարեն, պարսկերեն, արաբերեն, թուրքերեն և այլն:

Կյանքի վերջին շրջանում նա աշխատում էր նաև ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտում, որն այժմ կրում է նրա անունը:

Գիտութեանը մատուցած ծառայութիւնների համար 1933 թ., առանց դիսերտացիա պաշտպանելու (honoris causa), նրան շնորհվում է բանասիրա-

կան գիտությունների դոկտորի գիտական աստիճան և պրոֆեսորի կոչում, 1935 թ.՝ գիտության վաստակավոր գործչի կոչում: 1943 թ. նա ընտրվում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հիմնադիր կազմում՝ ակադեմիայի փակական անդամ: 1937 թ. Հ. Աճառյանը ընտրվել է Զեփոսովակիայի գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ: Մեծ հայագետը իր մահկանացուն կնքեց 1953 թ. ապրիլի 16-ին:

Աճառյանի գիտական գործունեությունը ծավալվել է բանասիրության, հայ, ընդհանուր և պատմա-համեմատական լեզվաբանություն, աղբյուրագիտության, անդամ՝ պատմագիտության և գրականագիտության, հայ հոգևոր մշակույթի այլևայլ բնագավառներում: Նա հատուկ ուսումնասիրություն է նվիրել հայոց գրերի գյուտին, հայ գրչագրությանը, ուսումնասիրել է հայերեն ձևագրերը, կազմել ձևագրացուցակներ, հավաքել է վիմական արձանագրություններ, բանասիրական բազմաթիվ ուղղումներ, ճշգրտումներ մտցրել հայ հին մատենագրության վիճելի հարցերում, զբաղվել է լազերենով, հայ բոշաների լեզվով, կազմել է դարբարի, պարսկերենի, արաբերենի, ինչպես նաև հայերենի, արեելյան գրականության ձևաբանություններ, ժողովածուներ, նույնիսկ՝ հայոց և ընդհանուր պատմության դասագրքեր: Այնուամենայնիվ, Հ. Աճառյանի գիտական գործունեության հիմնական բնագավառը լեզվաբանությունն է: Այդ ասպարեզում նա ստեղծել է բազմաթիվ մենագրական աշխատություններ, որոնցից յուրաքանչյուրը հայագիտության այս կամ այն ճյուղին վերաբերող յուրահատուկ մի կոթող է, առանձին գլուխգործոց:

Մեծ և անգնահատելի է Հ. Աճառյանի ներդրումը հայերենագիտության մեջ: Հայ բարբառագիտության, հայոց լեզվի պատմության, հայ բառարանագրության, հայերենի պատմա-համեմատական և համադրական ուսումնասիրության բնագավառում նա հիմնավոր, հաճախ առաջին խոսքն է ասել, ստեղծել է նոր ճյուղեր, ուղենշել նրանց հետագա զարգացման ընթացքն ու հեռանկարները:

Իր բազմամյա ստեղծագործական քեղուն կյանքի ընթացքում Հ. Աճառյանը հատուկ ուշադրություն է դարձրել հայ տասնյակ բարբառների փաստական նյութի հավաքման, առանձին բարբառների ուսումնասիրության, նրանց դասակարգման, ծագման և պատմության բազմապիսի հարցերին: Նրա ջանքերով է փաստորեն հիմնադրվել և իր հետագա զարգացումն ստացել հայ գիտական բարբառագիտությունը՝ որպես հայոց լեզվի ուսումնասիրության առանձին բնագավառ: Նրա բարբառագիտական առաջին ուսումնասիրությունները վերաբերում են Ասլանբեգի և Մուշավայի բարբառներին (1898-1899 թթ.): Օգտագործելով նախորդ շրջանի հայերենի բարբառների ուսումնասիրության ընձեռած տեսական և փաստական տվյալները, հենվելով իր իսկ կողմից արդեն հավաքած հարուստ նյութի վրա, նա առաջին հերթին զբաղվում է հայ բարբառների գիտական դասակարգման հարցերով և մի քանի բարբառների համառոտ նկարագրությամբ: Այդ հետազոտությունների ամփոփումն է 1909 թ. Փարիզում ֆրանսերեն լույս տեսած «Հայ բարբառների դասակարգումը» (Classification des dialectes arméniens, Paris, 1909) վերտառությամբ աշխատությունը, որ Սորբոնի համալսարանում ներկայացված էր որպես դոկտորական դիսերտացիա: Նույնի հայերեն տարբերակը՝ ավելի ընդարձակ և վերամշակված «Հայ բարբառագիտություն»

ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների» վերնագրով, լույս է տեսնում 1911 թ.:

Հիմք ընդունելով հիմնականում բարբառների ձևաբանական հատկանիշները և, առաջին հերթին, սահմանական եղանակի ներկայի և անցյալ անկատարի, երբեմն նաև դրանցից բխող ներգոյականի և բացառականի կազմությունը, Հ. Աճառյանն այն ժամանակ հայտնի հայերեն բարբառները բաժանում է 3 ճյուղի՝ ում, կը, ել, տալիս է այդ ճյուղերի բարբառների ընդհանուր նկարագրությունը, բերում է նմուշներ այդ բարբառներով, ցույց տալիս մի շարք բարբառների տարածվածության շրջանները:

Հ. Աճառյանի պատմական ծառայությունն այս բնագավառում այն է, որ առաջին անգամ հայերենագիտության մեջ նա գիտական ստույգ չափանիշներով տվել է հայ բարբառների ձևաբանական դասակարգումը, կատարել առանձին բարբառների ուսումնասիրությունը, դրանով բարբառագիտության առանձին առարկայի հիմքեր դնելով, կանխորոշել՝ նրա հետագա ուսումնասիրության ուղիները: Հետագայում նրա այդ դասակարգումը, թեև ենթարկվել է որոշ ճշտումների և լրացումների, բայց այն շարունակում է մնալ հայերեն բարբառների դասակարգման կողմնորոշող սկզբունքներից մեկը: Միաժամանակ պետք է նշել, որ հայերեն բարբառների տարբերակման սկզբունքները և հատկապես գործնական ստորաբաժանումները մինչև օրս էլ չեն կորցրել իրենց արժեքը:

Մյուս կողմից, իր իսկ մշակած սկզբունքներով Հ. Աճառյանը նկարագրական ուսումնասիրության է ենթարկել առանձին բարբառների հնչյունական, ձևաբանական-քերականական իրողությունները, հատուկ ուշադրություն դարձնելով բարբառային բառապաշարի հավաքման և քննման հարցերին: Նրա ջանքերով կատարվել են 10-ից ավելի մենագրական ուսումնասիրություններ՝ նվիրված Ագուլիսի, Առտիալի, Ասլանբեգի, Համշենի, Ղարաբաղի, Մարաղայի, Նոր Նախիջևանի, Նոր Զոլայի, Պուլսի, Սվեդիայի, Վանի բարբառների քննությանը, բարբառներ, որոնց մի մասը մեր ժողովրդի պատմական բախտի բերումով արդեն անհայտացել են և որպես հուշարձաններ մնում են այդ ուսումնասիրությունների շնորհիվ: Առանձին բարբառների ուսումնասիրման այս համակարգի կիրառման շնորհիվ Հ. Աճառյանի և հետագա ուսումնասիրողների կողմից վերջին տասնամյակներին կուտակված փաստական հսկայական նյութի արժեքն անգնահատելի է ոչ միայն հայ բարբառագիտության, այլև հայոց լեզվի պատմության, հնդեվրոպական և ընդհանուր լեզվաբանության որոշ հարցերի պարզաբանման, մեկնության և լուծման համար:

Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության հարցերը կենտրոնական տեղ են զրավում Հ. Աճառյանի հայագիտական ողջ ժառանգության մեջ: Հիշյալ ուսումնասիրությունների արդյունքները ամփոփված են նրա «Հայոց լեզվի պատմության» երկու հատորներում (Ա մաս՝ 1940 թ., Բ մաս՝ 1951 թ.): Հայոց լեզվի պատմությանը նվիրված այս կապիտալ աշխատության մեջ պատմա-համեմատական լեզվաբանության ձեռք բերած նվաճումների և սեփական արդյունքների ընձեռած փաստերի հիման վրա նա ներկայացնում է հայերենի պատմական զարգացումը նախահայերենից մինչև լեզվի արդի վիճակը, լեզվի պատմության հարցերը սերտորեն կապելով ժողովրդի պատմության, մշակույթի և քաղաքակրթության անցած փուլերի

հետո Առանձնակի քննության են ենթարկվում հնդեվրոպական ժագում ունեցող կամ իր տերմինով՝ բնիկ հայերեն բառերը, նրանց գործածության տարբեր ոլորտները, կենսունակության տարբեր աստիճանը, հնչյունական և իմաստային կապը, ինչպես հնդեվրոպական նախալեզվի կամ հիմք-լեզվի, այնպես էլ քույր լեզուների հետ, այդ կարգի բառերի հիման վրա վերականգնվում է նախահայերի քաղաքակրթության մակարդակը, զբաղմունքն ու մշակույթը: Այդ բառապաշարը համեմատելով հնդեվրոպական ցեղակից առանձին լեզուների համապատասխան բառերի և իմաստների հետ, վեր հանած ինչպես բացահայտ նմանությունների, այնպես էլ տարբերությունների հիման վրա բնորոշվում է հայերենի շփման աստիճանը, մոտավոր տեղն ու ժամանակաշրջանը քույր լեզուների հետ, որոշվում՝ հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շրջանում, մի կողմից՝ իրանական ու հունական, մյուս կողմից՝ սլավոնական լեզուների միջև:

Անդրադառնալով հայերենի ինքնուրույն զարգացման շրջանին, հայ լեզվաբանության պատմության մեջ առաջին անգամ քննվում է հայերենի բառապաշարը ըստ ծագման, գործածության տարբեր ոլորտների, կենսունակության, լեզվի զարգացման տարբեր շերտերի և այլն: Որոշակի արժեք են ներկայացնում ոչ միայն բնիկ հայերեն բառերին նվիրված հատվածները, այլև այն բաժինները, որտեղ քննվում են բառապաշարի բնագավառում հայերենի կրած տարբեր ազդեցությունները: «Արմատական բառարանի» ընձեռած փաստական նյութի հիման վրա հանգամանորեն քննության են առնվում հնագույն և հին փոխառությունները, որ հայերենը կատարել է իր պատմական զարգացման ընթացքում ինչպես ցեղակից, այնպես էլ ոչ ցեղակից, այժմ մեռած և կենդանի լեզուներից: Հատուկ ուշադրություն է նվիրված եվրոպական նորագույն փոխառությունների և հատկապես հայերենի բառապաշարի վրա ռուսերենի անընդհատ աճող ազդեցության հարցերին: Աշխատության մեջ առաջ քաշված և լուծված կարևոր խնդիրներից են՝ զրաբարի գրական խոսակցական լեզու լինելը, նրա զարգացման փուլերը, միջին հայերենի, հայերեն բարբառների առաջացումը, նրանց փոխհարաբերությունը, աշխարհաբարի կազմավորումը և այլն: Գիտական խոր վերլուծությամբ հիմնավորվում է հայոց լեզվի տարբեր որակների առաջացումն ու զարգացումը, բերականական ձևերի փոփոխման ընթացքը, այդ փոփոխություններն առաջացնող պատճառները: Քննության հատուկ նյութ են դարձել գրական լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակների բառապաշարի, նաև քերականության ընդհանրություններն ու հիմնական տարբերությունները: Հսկայական փաստական նյութի ընդգրկմամբ, արծարծված հարցերի և պրոբլեմների կարևորությամբ և բազմազանությամբ, դրանց գիտական ճիշտ մեկնաբանությամբ և լուծմամբ «Հայոց լեզվի պատմություն» աշխատությունը բացառիկ տեղ է զբաղում ոչ միայն Հ. Աճառյանի ժառանգության, այլև հայոց լեզվին նվիրված գրականության մեջ:

Մեծ են Հ. Աճառյանի ծառայությունները բառագիտության և բառարանագրության բնագավառներում: Սովետական շրջանի հայ բառարանագրության մեջ առանձնահատուկ տեղ է զբաղում Հ. Աճառյանի Արմատական բառարանը: Աշխարհի սակավաթիվ լեզուների է վիճակված ունենալու սեփական լեզվի ստուգաբանական բառարան: Այդ երջանիկ լեզուների մեջ, Հ. Աճառյանի շնորհիվ, իր պատվավոր տեղն է զբաղում նաև հայերենը: Արմատական բա-

աւարանը, լինելով Հ. Աճառյանի՝ տասնամյակներ ընդգրկող մեղվաջան աշխատանքի արգասիքը, ոչ միայն հեղինակի գլուխգործոցն է, այլև հայ բառարանագրության պարծանքը: Բառարմատների ընդգրկման ծավալով, յուրաքանչյուր արմատի վերաբերյալ բերված ստուգաբանական, բառագիտական, հնչյունաբանական, իմաստաբանական և այլ տվյալներով այն մի յուրատեսակ լեզվաբանական հանրագիտարան է և իր տեսակի մեջ մնում է անգերազանցելի: Բառարանում ընդգրկված է հին մատենագրությամբ հիշատակված մոտ 11 հազար բառարմատ: Հինգ բաժիններից կազմված բառարանի առաջին բաժնում բերվում է բառարմատը որպես գլխաբառ: Հնդեվրոպական ծագում ունեցող, այսինքն՝ բնիկ հայերեն բառերը տրվում են հատուկ նշանով: Առաջին հերթին տրվում են այդ արմատի բոլոր իմաստները՝ դրանք հաստատող դասական վկայություններով: Այնուհետև նշվում են հիշյալ արմատի բոլոր գոյությունները կամ հնչյունական տարբերակները, անգամ սխալներն ու բացարձակ վրիպակները: Բաժինն ավարտվում է տվյալ արմատի բաղադրությունների կամ դրանցով հետագայում բաղադրված բառերի թվարկմամբ: Առաջին բաժնում, փաստորեն, բացատրվում է գլխաբառ-բառարմատը, բերվում են լրացուցիչ համապատասխան հնչյունաբանական, իմաստաբանական, աղբյուրագիտական, բառակազմական մանրամասն տվյալներ:

Բառարմատի բուն ստուգաբանությունը ընդգրկում է երկրորդ բաժինը, որտեղ ստուգաբանվում է գլխաբառ-բառարմատը՝ իբրև բնիկ՝ հնդեվրոպական ծագում ունեցող կամ էլ՝ որպես որևէ լեզվից կատարված փոխառություն: Այդտեղ, որպես օրինք, բնիկ հայերեն բառարմատների հնդեվրոպական նախալեզվի վերականգնվող ձևերի հետ բերվում են նաև բոլոր քույր լեզուների համապատասխանությունները, որով և բառահոգվածի այս հատվածը իրականում դառնում է հնդեվրոպական լեզուների արմատական բառերի համեմատական յուրահատուկ բառարան: Նույն բաժնում են ստուգաբանվում նաև հայերեն «ոչ բնիկ» բառարմատները, մատնանշվում ցեղակից և ոչ ցեղակից այն լեզուները, որոնցից կատարվել են փոխառությունները, բերվում են բառերի համապատասխան ձևերն ու իմաստները փոխատու լեզուներում:

Բառարանի երրորդ բաժինը վերաբերում է հիմնականում տվյալ բառարմատի ստուգաբանության պատմությանը: Այստեղ հիշատակվում են ստուգաբանության հեղինակները, և, եթե քառի ստուգաբանությունը անհավանական է համարվում և չի ընդունվում կամ զուրկ է անգամ գիտական որևէ արժեքից, բերվում է հիշյալ ստուգաբանությունը՝ հետագայում այն հաշվի առնելու կամ այդ սխալից խուսափելու նպատակով: Բառարանի չորրորդ բաժինը նվիրված է այլ լեզուների վրա հայերենի ունեցած ազդեցությանը և ուրիշ լեզուների՝ հայերենից կատարած փոխառություններին: Վերջին՝ հինգերորդ բաժինն ամբողջապես նվիրված է հայերեն տվյալ արմատի բարբառային համապատասխանություններին, ցույց է տրված, թե տվյալ բառարմատը ո՞ր բարբառում և ի՞նչ ձևով (հնչյունական կաղապարով) է պահպանվել:

Վերոհիշյալ եղանակով, շուրջ 11 հազար արմատից (ստույգ՝ 10996) Հ. Աճառյանը առանձնացնում է 8775 բառարմատ, որից ստուգաբանում է 5095-ը, 927-ը բնիկ՝ հնդեվրոպական, 4015-ը՝ փոխառյալ, 3680-ը՝ դեռևս չմեկնված, իսկ 2221 արմատ համարվում է անվավեր:

Այսպիսով, լեզվաբանական-բանասիրական մի շարք բաժինների ընդ-

գրկման ժալալով այս աշխատանքը դուրս է գալիս սոսկ ստուգաբանական բառարանների առաջագրված խնդիրների սահմաններից և, փաստորեն, դառնում է բառի լեզվաբանական-բառագիտական համակողմանի բնութագրման մի կարևոր տեղեկատու-ձեռնարկ։ Բառարանում ամփոփված բազմաթիվ լեզուների տվյալները և հատկապես հայերեն գլխաբառ-բառարմատի ստուգաբանության ժամանակ տրվող ազգակից լեզուների համադրական հարուստ նյութը, հեղինակի պատմա-համեմատական մեթոդով կատարած ուսումնասիրության հարուստ փաստերը ինքնին գիտական մեծ արժեք են ներկայացնում և այդ առումով դժվար է գերազնահատել այս բառարանի արժեքը ոչ միայն հայերենի, այլ նաև ցեղակից՝ հնդեվրոպական և ոչ-ցեղակից լեզուների բառային կազմի ուսումնասիրության ասպարեզում։ Դարագլուխ կազմող կոթողային այս աշխատության հրապարակ զալը, մշակութային խոշոր իրադարձություն էր հայ իրականության մեջ։ Այդ գործի, նրա վրա կատարված տիտանական աշխատանքի վերաբերյալ, որ իրագործել է Հ. Աճառյանը, իրենց հիացմունքն են արտահայտել և՛ հայագգի, և՛ օտարագգի խոշոր մասնագետները։ Ֆրանսիացի աշխարհահռչակ լեզվաբան Անտուան Մեյեն գրել է. «Ոչ մի լեզվի համար չկա այսքան նոխ, այսքան կատարյալ ստուգաբանական բառարան...»։

Ն. Ակինյանը իր զարմանքն ու ակնածունքն է արտահայտել, գրելով՝ «Հսկայական գործի մը առջև կը գտնվիմ. «Հայերեն արմատական բառարան»։ այսպես անպաճույճ որակած է հեղինակը յուր աշխատասիրությունը. բայց այս վերնագիրը չի ներկայացնիր ճշգրիտ գաղափար բովանդակության մասին։ Ես պիտի նախընտրեի կոչել բառագանձ հայերեն լեզվի, արմատական, ստուգաբանական, գալառաբանական և պատմական ուսումնասիրությամբ բառերու։ Այս հորջորջումը լիովին պիտի համապատասխաներ այն բովանդակությանը, զոր կընդգրկե բառագիրքս...

Զգլխիչ ծրագիր արդարև։

Ի տես այս ծրագրին պիտի բացազանչեի թե հեղինակը ձեռնամուխ եղած է հանհարհիս։ Անհատական ուժը չէր կարող հասնիլ այս ընդարձակածավալ կառուցվածքին կատարման։ Բայց Աճառյան հասած է բարյավ։ Նա տված է աշխատություն մը, որ կը մնա աննախընթաց օրինակ, նույնիսկ համաշխարհային գրականության մեջ։

Հայ բառարանագրության մեջ արժեքավոր ներդրում է նաև Հ. Աճառյանի հինգհատորանոց «Հայոց անձնանունների բառարանը», որ լույս է տեսել 1942-1962 թթ.։ Այն կազմված է բանասիրական-լեզվաբանական և պատմական-հանրագիտական տեսանկյունով և, փաստորեն ներկայացնում է բանասիրական և հանրագիտական բառարանների կազմության սկզբունքների միավորման միջոցով ստեղծված անպիսի բառարանի մի նոր տիպ, որտեղ տրվում են հայերեն անձնանունների թե՛ լեզվաբանական-ստուգաբանական և թե՛ նրանց պատմական-գործածական բազմակողմանի, մանրամասն տվյալներ ու բնութագրումներ։ Անձնանունների ընդգրկման ժալալը, նրանց ստուգաբանական-լեզվաբանական բնութագրումը, ինչպես նաև յուրաքանչյուր անվանը տրվող պատմական տեղեկությունները բազմահատոր սույն բառարանը դարձնում են ոչ միայն լեզվաբանական-բանասիրական, այլև պատմական-աղբյուրագիտական, հանրագիտական հազվագյուտ մի ձեռնարկ։

Հայոց անձնանունների բառարանի նպատակն է եղել հավաքել և ներ-

կայացնել այն բոլոր անձնանունները, որ պատմութեան ընթացքում որևէ հայ անհատ կրել է երբեկեց, անկախ դիրքից ու աստիճանից, պարած շրջանից կամ երկրից: Բառարանը ընդգրկում է ամենահին շրջանից մինչև XV դ. ներառյալ հայոց պատմութեան մեջ արձանագրված և ընդհանրապես այս կամ այն առիթով հիշատակված հայերեն բոլոր անձնանունները, իսկ XVI-XVIII դդ. համար առնված են միայն պատմական և գրական կարևոր դեմքերը: Բառարանը ընդհանրապես ամփոփում է մինչև մեր դարի 40—50-ական թվականները հայերի մեջ գործածվող անձնանունները:

Բառարանի առաջին բաժինը լեզվաբանական-ստուգաբանական բնույթ ունի, երկրորդը՝ պատմական-աղբյուրագիտական: Առաջին բաժնում տրվում է անձնանունը սրպես գլխաբառ, նշվում նրա սեռը, որին հետևում է անվան ծագումը կամ ստուգաբանությունը և, եթե անունը օտար է, նրա համապատասխան ձևերը մի քանի կարևոր լեզուներով, ինչպես նաև այդ անունով մի քանի նշանավոր դեմքեր օտար ազգերից, այլ ժողովուրդներից: Այնուհետև բերվում են այդ անվան փաղաքական կամ կրճատ ձևերը մեր բարբառներում կամ ժողովրդա-խոսակցական լեզվում: Լեզվաբանական-ստուգաբանական այս առաջին բաժնին հետևում է պատմական-աղբյուրագիտական տեղեկատու բաժինը, որտեղ ժամանակագրական կարգով բերվում են այդ անունով հիշատակված բոլոր անձնավորությունները մինչև 1500 թ. անխտիր, իսկ 1500 թ. հետո՝ միայն նշանավորները: Տրվում է դրանց սեռը և ամփոփ կենսագրությունը և այն բոլոր աղբյուրները, որոնցում տվյալ անձնանունը հիշատակվում է:

Այսպիսով, Հ. Աճառյանի արմատական և անձնանունների բազմահատոր բառարանները ոչ միայն սովետահայ բառարանագրութեան նվաճումն են, այլև իրենց գիտական և գործնական արժանիքներով դուրս են եկել ազգային շրջանակներից և, փաստորեն, դարձել համաշխարհային բառարանագրութեան անկապտելի գանձերը:

Հայերենի բառարանաշարի մի մասն են կազմում գավառական բառերը և դարձվածային այն միավորները, որոնք տարածված են բարբառներում և հանդիսանում են զրական լեզվի համալրման ու հարստացման կարևոր աղբյուրներից մեկը: Այդ կարգի ավելի քան 30 հազար բառեր ու դարձվածներ է պարունակում Հ. Աճառյանի «Հայերեն գավառական բառարանը», որ լույս է տեսել 1913 թ.: Բառարանում ընդգրկված են հայերեն գավառական բառերը, բարբառներում և ժողովրդա-խոսակցական լեզվում տարածված դարձվածային միավորները, ինչպես նաև այն բաղադրությունները, որոնք կազմված են հայ և օտար բաղադրություններից: Հ. Աճառյանը գավառական բառերի հնչյունական բաղադրությունը տարբերակներից վերականգնել է մայր ձևը, որը հետագայում փոփոխման է ենթարկվել բարբառներում: Շատ անգամ, եթե բառը հիշատակվում է միայն մեկ բարբառում և տվյալ բարբառային հնչյունական օրինաչափությամբ ամրացված ձևով, նախաձեռն վերականգնելու նպատակով Աճառյանը դիմել է բառի ստուգաբանությանը և տվյալ բարբառին հատուկ հնչյունական օրենքների բացահայտմանը: Յուրաքանչյուր գավառական բառի մաս նշվում է նրա գործածման վայրը, որոշ բառերի համար նաև աղբյուրը: Բառերի հոմանիշները և կրկնակները, որոնք տարածված են տարբեր բարբառներում, տրված են իրար մոտ: Բառերի իմաստները հաստատելու համար բերվում են օրինակներ, որոշ դեպքերում կատարվում են նաև

բառակազմական և ստուգաբանական վերլուծություններ, Բառարանի արժեքը մեծ է ոչ միայն պատմական, այլև արդիական տեսակետից: Այդ բառարանի շնորհիվ հազարավոր բառեր փրկվելով անհետ կորստից, մտել են շրջանառության մեջ, մուտք են գործել ոչ միայն հետազայում կազմված հայերեն բոլոր բառարանները, այլև գեղարվեստական գրականության մեջ, մասամբ նաև գրական լեզվի բառապաշարը:

Հայերենի պատմա-համեմատական և կառուցվածքային ուսումնասիրությանն է նվիրված Հ. Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի» համեմատությամբ 562 լեզուների» բազմահատոր աշխատությունը, որի 8 պրբերն արդեն լույս են տեսել:

Աշխատության առանձին հատորներում հայերենի խոսքի առանձին մասերը, հնչյունաբանական, բառագիտական, շարահյուսական իրողությունները քննվում են երեք բաժիններում՝ ընդհանուր լեզվաբանական, հնդեվրոպական լեզուների համեմատական քերականության և հայերենի պատմա-համեմատական քերականության: Հիշյալ լեզվական խրակությունների ուսումնասիրությունը կատարվում է հետևյալ սկզբունքով: Նախ, լեզվական տվյալ երևույթը քննության է առնվում աշխարհի բազմաթիվ լեզուներում, այնուհետև նյութը հայերենին ցեղակից հնդեվրոպական լեզուներում, որից հետո հեղինակն անցնում է հայերենին, քննության է առնում հիշյալ լեզվական իրակությունը ցեղակից լեզուների համեմատությամբ, նշում ընդհանրություններն ու տարբերությունները և, վերջապես, համակողմանիորեն բացահայտում լեզվական այդ երևույթի քոլոր դրսևորումները գրաբարում, միջին հայերենում, հայերեն բարբառներում և ժամանակակից հայերենում:

Հ. Աճառյանը սույն աշխատության մեջ հանրագումարի է բերում աշխարհի ավելի քան հինգ հարյուր լեզուների, այդ թվում նաև հայերենի և ցեղակից լեզուների հարյուրամյա հետազոտությունների արդյունքները, այդ բազմաթիվ լեզուների քերականական, բառագիտական, հնչյունաբանական և այլ իրողությունների համադրությամբ քննում է հայոց լեզվի կառուցվածքն ու պատմական զարգացումը: Աշխատությունն, այսպիսով, դառնում է յուրահատուկ հանրագիտարան, որտեղ ամփոփված է հայերենի և ցեղակից ու ոչ ցեղակից լեզուների համադրական-համեմատական ուսումնասիրության փաստական և վերլուծական հսկայական նյութ:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում աշխատության «Ներածություն» ստվար հատորը, որ լույս է տեսել 1955 թ.: Հատորն ընդգրկում է ընդհանուր լեզվաբանության տեսական խնդիրները: Այնտեղ ուսումնասիրված են լեզվի բնորոշման, լեզվի՝ որպես հասարակական երևույթի բնութագրման, լեզվի ծագման և զարգացման հարցերը: Ուշադրության արժանի են հատկապես այն գլուխները, որոնք նվիրված են լեզվի հոգեբանական և բնախոսական կողմերին: Այդ գլուխներում հայ իրականության մեջ առաջին անգամ լուսաբանվում են լեզվի՝ իբրև ճշմարտության, համառոտության, հիշողության, վերլուծման միջոցի և խոսողության բնախոսական նախադրյալների ու պրոցեսների թաղանթի խնդիրներ: Պակաս արժեք չունեն նաև այն գլուխները, որոնցում քննվում են լեզվի էվոլյուցիայի, կենսաբանության, փոխանցման, լեզվի՝ իբրև հասարակական երևույթի, լեզուների ազդեցության և փոխազդեցության դանազան հարցեր: Հատորի երկրորդ մասը նվիրված է լեզուների դասակարգման, ցեղակցության հարցերին: Այս հաս-

վածում ամփոփված են աշխարհի լեզուների դասակարգման վերաբերյալ կուտակված հարյուրամյա արդյունքները: Անհրաժեշտ է նշել նաև, որ հարյուրավոր լեզուների ընդգրկմամբ լեզվական իրողությունների համեմատական-համադրական քննությանը վերաբերող նման աշխատանք առաջին անգամ է կատարվում և բացառիկ երևույթ է համաշխարհային լեզվաբանական գրականության մեջ:

Մեծ է Հ. Աճառյանի ավանդը գիտական բարձրորակ կադրերի պատրաստման և դաստիարակության գործում: Նրա դպրոցից է անցել սովետահայ լեզվաբանների մի ամբողջ սերունդ, որն այժմ իր նպաստն է բերում հայրենի գիտության առաջընթացին:

Հ. Աճառյանը նաև մեծ հայրենասեր էր: Նրա կյանքը ժողովրդին ծառայելու, գիտական իր հավատամքի պաշտպանության դիրքերում անհողողող կամքի, բարձր սկզբունքայնության մի պայծառ օրինակ էր: Նրա արտակարգ բեզմնավոր գործունեությունը գիտական անօրինակ մի սիրանք էր, որով ապացուցվեցին նաև անհատի անսահման կարողությունները մարդկային մեկ սերնդի կարճատև կյանքի ընթացքում:

ВЕРШИНА АРМЯНСКОГО ЯЗЫКОЗНАНИЯ

А. М. СУКИАСЯН

Резюме

Исполнилось 100 лет со дня рождения крупнейшего лингвиста Рачия Ачаряна. Велико его научное наследие, которое охватывает почти все области армянского, да и не только армянского языкознания. Он по праву считается создателем определенных типов армянских словарей, основателем армянской научной диалектологии, истории армянского языка, историко-сравнительного метода изучения армянского языка. Его перу принадлежат такие фундаментальные исследования, как «Классификация армянских диалектов», «Армянская диалектология», «История армянского языка» (в 2-х томах), «Этимологически-коренной словарь армянского языка» (в 7-ми томах), многотомное исследование «Полная грамматика армянского языка в сравнении с 562 языками», «Словарь армянских личных имен» и др.

Благодаря исследованиям Р. Ачаряна арменоведение и армянское языкознание в частности получили мировое признание.